ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«02» «փետրվարի» 2026 թվական № 44-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 5-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2026 թվականի հունվարի 29-ի N 42/45.45/2341 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 475-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 5-Լ հրամանի հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) հրամանի հավելվածի 29-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր ենթակետով.

«21) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-21):».

2) հավելվածի 29-րդ կետի 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 24-րդ ենթակետերում «ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերը փոխարինել «բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել հավելվածի 29-րդ կետի 6-րդ ենթակետը.

«6) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-12)»:

2/2/2026

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by: ATANESYAN SERGO 4007880425

Ս.ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երևան